եկեալ բանակեցաւ մերձ յԵրուսաղէմ. դիմեցին առ նա լատինք մեծամեծ պատարագօք և որսացին զնա ի կողմն իւրեանց։ Եւ ի վինել անդ ժողովոյ՝ մատուցին զմուրհակն դերեզմանատան եւ յեցեալ յիմաստս նորա պնդէին թէ՝ տեղին սեփհականութիւն է լատինաց։

Իսկ կուսակալն կամելով չնորհս առնել լատինաց, ոչ ընկալաւ զՀայս մարդասիրութեամբ եւ ոչ ունկն մատոյց բանից նոցա։ Եւ այս եղեւ բովանդակութիւն բանից նորա, «Առ այժմ գրաւեսցեն լատինք զտեղին, և յաղագս սահմանաց նորին գրեսցի մուրհակ», զայս ասաց և ցրուեաց զժողովն։ Լատինք դարձ արարեալ անտի դիմեցին բազմութեամբ ժողովրդոց եւ միաբանաց ի դերեզմանատունն անդր փայտատ և բրիչ և զայլ գործիս ի ձեռին, և տապալեալ խորտակեցին զտապանաքարս դրոշմեալս հայկական տառիւք, աւելի քան զերեք հարիւր, եւ պեղեցին զՀող տեղւոյն, և զոսկերս մեռելոցն արկին կոխան ոտից, և եղեւ աղմուկ և խռովութիւն մեծ, և այսպիսի բռնութեամբ չինեալ հաստատեցին զսահմանն զայն զոր կամէին։ Ողբային ժողովուրդք Հայոց արք և կանայք՝ զի կորուսին զդերեզմանս ազգատոհմի իւրեանց և դառն արտասուօք դիմեցին առ կուսակալն, և մատուցին առ նա դիր աղաչանաց, յորում աղաչէին չզրկել զինքեանս ի դերեզմանաց նախնեաց իւրեանց. վկայ կոչէին զբովանդակ այլազգիս Երուսաղէմի, և զքարինս հայկական տառիւք դրոշմեալ, յորոց ներքոյ հանդչէին մարմինք հարց, մարց, եղբարց, որդւոց և ազգականաց նոցին, զորս անխնայ խորտակեցին և զտեղին յափշտակեցին՝ այլովքն հանդերձ։ Սակայն կուսակալն ոչ զգիրս նոցա ընթերցաւ և ոչ բանից նոցա ունկն մատոյց, այլ հրամայեաց վարել զնոսա անտի բռնութեամբ։ Թէպէտ նա ինքն յաւաջագոյն ըստ աղաչանաց Հայոց ի Դամասկոս գրեալ էր առ դատաւորս Երուսաղէմի, զի մի թոյլ տացեն լատինաց բռնանալ ի վերայ Հայոց։ Ցետ այսր ամենայնի վերստին դիմեցին Հայք առ դատաւորն, և աղաչանս արկեալ պաղատէին առ նա գրել ի Դաւուն զամենայն չարիս զոր անցուցին լատինք ընդ Հայս, և նա յանձն առեալ գրեաց զամենայնն, ուր յետ այլոց բանից ասէ՝ դերեզմանատանց Սիոնի տիրեալ են Հայք ըստ զօրու-